ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
24 դեկտեմբերի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 53 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդական՝ Կամո Արեյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանը, կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը, անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետ Արմեն Առաքելյանը, առողջապահության վարչության պետ Դավիթ Կարապետյանը, տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Մակվեցյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Հակոբյանը, լրատվության վարչության պետ Տարոն Գևորգյանը և «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով՝ Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստը կգումարվի 2025 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10.00-ին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Արեգ Գևորգյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 11-ի հ.19 արձանագրության՝ Երևանի ավագանու Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Աշոտ Սարգսյանին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 23 հարց, որից՝ 2-17-րդ հարցերը չզեկուցվող են.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոններ սահմանելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին: (Չզեկուցվող)
6. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
8. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)
9. «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին: (Չզեկուցվող)
10. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխոթյուններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
12. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
13. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ: (Չզեկուցվող)
14. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 561-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին: (Չզեկուցվող)

15. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)

16. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին: (Չզեկուցվող)

17. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Չզեկուցվող)

18. Երևան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկուցվող)

19. Երևան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկուցվող)

20. Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)

21. Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին: (Զեկուցվող)

22. Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին: (Զեկուցվող)

23. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին: (Զեկուցվող)

Ելույթով հանդես եկավ ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և առաջարկեց 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան կամ չզեկուցվող 9-րդ՝ ««Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» և 2-րդ՝ «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին» հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ելույթով հանդես եկավ ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը և առաջարկեց 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան կամ չզեկուցվող 2-րդ՝ «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին» հարցը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեմ է 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ քվեարկության է դրվում 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված բոլոր հարցերը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 25, դեմ՝ 34, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ քվեարկության է դրվում 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 2-րդ՝ «Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 27, դեմ՝ 32, ձեռնպահ՝ 2

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ քվեարկության է դրվում 2024 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 9-րդ՝ ««Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին»» հարցը» հարցը զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան քննարկելու առաջարկը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 29, դեմ՝ 26, ձեռնպահ՝ 6

Առաջարկը չընդունվեց:

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը և մանրամասն տեղեկատվություն ներկայացրեց օրակարգի 17-րդ՝ «Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին» հարցի վերաբերյալ:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 21, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 17-րդ հարցերը:

Տ.Ավինյանը տեղեկացրեց, որ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված՝ Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

3. Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոններ սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Սահմանել Երևան քաղաքի վարչական տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները և լրացուցիչ կանոններ՝ համաձայն հավելվածի:

4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 28,000.0 հազար դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով:

2. Որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-4 հավելվածների

5. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

6. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N48-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 48-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-7 հավելվածների:

7. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Բնապահպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Բնապահպանության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000		697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000		561,000
3	գլխավոր մասնագետ	1	323,000		323,000
4	գլխավոր մասնագետ-դենդրոլոգ	1	323,000		323,000
5	գլխավոր մասնագետ-էկոլոգ	1	323,000		323,000
6	գլխավոր մասնագետ-կենդանաբան	1	323,000		323,000
7	առաջատար մասնագետ	2	289,000		578,000
8	առաջին կարգի մասնագետ	2	282,200		564,400
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**			**3,692,400**

»

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «784», «262,034,245» թվերը փոխարինել համապատասխանաբար «786», «262,639,445» թվերով:

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2313», «691,953,645» թվերը փոխարինել «2315», «692,558,845» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

8. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 8.2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.2) շենքերի և շինությունների վերակառուցման կամ կառուցման աշխատանքների ընթացքում՝

ա. Կառուցապատողը պետք է կազմակերպի վերակառուցվող կամ կառուցվող շենքի կամ շինության արդեն իսկ կառուցված ամբողջ հատվածի 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը.

բ. կառուցվող կամ վերակառուցվող շենքը կամ շինությունը շինարարության ամբողջ ընթացքում պետք է գտնվի ցանցով ծածկված վիճակում՝ մինչև շինարարական աշխատանքների ամբողջական ավարտը, այդ թվում՝ երեսպատման, շենքի արտաքին հատվածներում բազրիքների և այլ տարրերի ու պատուհանների տեղադրման աշխատանքների կատարումը.

գ. ցանցով ծածկումը պետք է իրականացվի ցանցը կառուցվող կամ վերակառուցվող շենքից կամ շինությունից մինչև 2.5 մետր հեռավորության վրա՝ առանձին համակառուցվածքի (կոնստրուկցիա) վրա ամրացնելու միջոցով,»:

9. «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու, «Երևանի «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն անվանափոխել «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության:

2. Հաստատել «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը (անվանափոխված՝ «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն):

4. Սահմանել, որ «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը «Թիվ 19 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունն է (անվանափոխված՝ «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն), վերջինիս են անցնում

միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

5.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Մալաթիա-Սեբաստիա» մանկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության վերակազմակերպման գործընթացի իրականացումը՝ այդ թվում՝ միացման պայմանագրի և փոխանցման ակտի հաստատումը:

10. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N41-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կոմունալ տնտեսության վարչություն» գլխի՝

ա. 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2	վարչության պետի տեղակալ	2	561,000		1, 122, 000

»,

բ. «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում «27» և «28» թվերը փոխարինել համապատասխանաբար «8,632,600» և «9,193, 600» թվերով:

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «786.0», «262,639,445» թվերը փոխարինել համապատասխանաբար «787.0», «263,200,445» թվերով.

3) «ԱՄԲՈՂՋԸ» տողում «2315.0», «692,558,845» թվերը փոխարինել «2316.0», «693,119,845» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

11. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի N48-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» N 48-Ն որոշման հավելվածի 13-րդ կետից հետո լրացնել նոր 13.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.1. Սույն կարգի 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ կամ 4.1-ին ենթակետերով կամ 13-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ տարածքի սանիտարական մաքրման, այդ թվում՝ ձնամաքրման կամ տարածքի կանաչապատման կամ կանաչ տարածքների անհրաժեշտ խնամքի ու պահպանման պարտադիր բարեկարգման աշխատանքների կատարումից ազատվում են անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր նշված աշխատանքների վերաբերյալ Երևան համայնքի ենթակայությամբ գործող կազմակերպությունների հետ ունեն կնքված ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր:»:

12. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

13. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ**:**

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2025 թվականի ծրագիրը՝ (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին, Հայաստանի Հանրապետություն քաղաքացիական օրենսգրքին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքից.

3) քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, համայնքային կամ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված և համայնքային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N 682 որոշումներով հաստատված կարգերին համապատասխան.

4) հողամասերն անհատույց օգտագործման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական.

5) Հայաստանի Հանարպտության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման համար հողամասերի ուղղակի վաճառքի դեպքում ձեռք բերողների համար կարող է սահմանվել նաև տարաժամկետ վճարման իրավունք.

6) հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով.

7) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերություններն ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմանը համապատասխան:

14. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N 561-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N 561-Ն որոշման հավելվածով սահմանված ցանկի «ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ» բաժինը լրացնել նոր 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

54	Ղազար Փարպեցու փողոց
55	Հին Երևանցու փողոց
56	Բայրոնի փողոց
57	Ավագ Պետրոսյան փողոց
58	Ալ. Թամանյան փողոց
59	Մովսես Խորենացու 1-ին նրբանցք
60	Դեղատան փողոց

61	Գևորգ Քոչարի փողոց

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

15. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետից հետո լրացնել նոր 12.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1) «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 100 դրամ.».

2) Որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձերը վճարած անձինք նույն ժամկետներում, նույն պայմաններով անհատույց օգտվում են տրոլեյբուսների և Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից: Ուղևորության քանակական սահմանափակում ունեցող ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու դեպքում՝ ուղևորության օգտագործման հնարավորությունը տրոլեյբուսների կամ Երևան քաղաքի մետրոպոլիտենի ծառայություններից անհատույց օգտվելու յուրաքանչյուր դեպքում՝ 1 օգտագործման հնարավորությամբ նվազեցվում է:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով Որոշման 1-ին կետում լրացվող 12.1-ին ենթակետի դրույթները գործում են մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը:

16. Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը, ընդհանուր՝ 15793760 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Երևանի ենթակայության մարզադպրոցներին՝ համաձայն հավելվածի:

17. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 67509.0 հազ. (վաթսունյոթ միլիոն հինգ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 16, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2024 թվականի նոյեմբերի 19-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

18. ԼՍԵՑԻՆ –Երևան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
3. Հայկ Գրիգորյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը և քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) տեղական տուրք վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային.

2) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների (թույլտվությունների տրամադրման) համար տեղական տուրքը գանձվում է նախքան սույն որոշմամբ սահմանված գործողությունների կատարումը (վավերացումը) և (կամ) թույլտվությունների տրամադրումը կամ համայնքային ծառայությունների մատուցումը.

3) սույն որոշմամբ սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական տուրքի գումարը չվճարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում.

3. Անկախ սույն որոշման հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված գործակիցների կիրառությունից՝ շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված՝ շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում սույն որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0.5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության երկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է սույն որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով:

4. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական տուրքերի դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 31, դեմ՝ 23, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
2. Հայկ Գրիգորյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
3. Իոսիֆ Կուբատյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը և քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1.Արշակ Սարգսյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2.Գրիգոր Իսկանդարյան – Երևանի ավագանու «մայր Հայաստան» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

3.Գևորգ Ստեփանյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

4. Սամվել Հակոբյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

5. Մանուկ Սուքիասյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

6.Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

7. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց», «Մայր Հայաստան» և «Հանրապետություն» խմբակցությունների անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկան Արամ Թորոսյանը, Մանուկ Սուքիասյանը և Հայկ Սահակյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 17-րդ ենթակետով՝ մինչև քվեարկության

անցկացումը Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանի պահանջով հայտարարվեց 15 րոպե ընդմիջում:

Ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 12.05-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան համայնքում (այսուհետ՝ Երևան) տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) սույն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ Երևանի համար սահմանված 1-ից մինչև 12 տարածագնահատման գոտիականությունը, կիրառելով 1.9 բազային (առավելագույն) գործակիցը, ընդ որում՝ տարածագնահատման 2-րդ գոտուց սկսած՝ յուրաքանչյուր հաջորդ գոտու նկատմամբ կիրառվում է լրացուցիչ նվազեցնող՝ 0.15 գործակից.

2) տեղական վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային.

3) Երևանի կողմից մատուցվող ծառայությունների համար տեղական վճարը գանձվում է ծառայության մատուցումից առաջ, ընդ որում՝ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 23-րդ և 24-րդ կետերում նշված ծառայությունների մատուցման դիմաց տեղական վճարը գանձվում է մինչև յուրաքանչյուր ամսվա 6-ը, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ, 22-րդ, 28-րդ և 35-րդ կետերում նշվածների, որոնց դեպքում տեղական վճարը գանձվում է ծառայությունը մատուցելուց հետո: Ընդ որում՝ սույն որոշմամբ սահմանված հավելվածի 35-րդ կետում նշված ծառայությունների դիմաց տեղական վճարը վճարվում է որակի աստիճանի շնորհման ժամկետում՝ նույն կետով սահմանված կարգով:

4) սույն որոշմամբ սահմանված հավելվածի 24-րդ կետում նշված ծառայությունների դիմաց վճարման ենթակա տեղական վճարի ամսական դրույքաչափը վճարվում է 2025 թվականի 10 ամսվա ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց (2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը և 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ուսուցման համար):

5) սույն որոշմամբ սահմանված ծառայությունների մատուցումը կարող է մերժվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դրանց տրամադրման համար նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու և (կամ) տեղական վճարի գումարը չվճարելու դեպքում.

3. Երևանի քաղաքապետին՝ ապահովել տեղական վճարների դրույքաչափերի, վճարման կարգի և ժամկետների, ամսվա ընթացքում տեղական վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաև Երևանի ավագանու սահմանած արտոնություններ ստացած անձանց և համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումն Երևանի պաշտոնական համացանցային www.yerevan.am կայքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Ալբերտ Մովսեսյան - Երևանի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

1. Երևան համայնքի ենթակայությամբ գործող պետական և համայնքային ուսումնական հաստատությունների, Երևանի վարչական տարածքում պետական ենթակայությամբ գործող սոցիալական պաշտպանության կազմակերպությունների կառուցման և վերակառուցման համար՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. 2023 թվականի հուլիսի 7-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 687-Ն որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային

առաջադրանք) կազմելու համար նախատեսված տեղական վճարը վճարված լինելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության տրամադրման համար սահմանված տեղական տուրքի վճարման ենթակա գումարը նվազեցվում է նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար սահմանված տեղական վճարի գումարի վճարված չափին համամասնորեն:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում, որոնց պարագայում յուրաքանչյուր փոփոխության արդյունքում ընդհանուր միասին գումարային արտահայտությամբ վերցված փոփոխվող մակերեսի (շենքերի և շինությունների ստորգետնյա և վերգետնյա հարկերի արտաքին չափերի մակերեսների հանրագումար) ընդհանուր չափը չի գերազանցում մինչև առաջին և յուրաքանչյուր հաջորդական փոփոխությունների կատարումը նախագծային փաստաթղթերով հաստատված մակերեսի հինգ տոկոսը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս շինարարության թույլտվության՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում սույն որոշման 4-րդ կետով նախատեսված չափից ավելի մակերեսի ավելացում (բացառությամբ վերգետնյա հարկի (հարկերի) ավելացում նախատեսող նախագծերի համաձայնեցման դեպքերի) նախատեսող փոփոխություններ կատարելու դեպքում, որոնց արդյունքում նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի վճարման ենթակա գումարը գերազանցում է մինչև տվյալ փոփոխություն կատարելը վճարված տեղական տուրքի դրույքաչափը՝ նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ ընդհանուր մակերեսի համար հաշվարկված տեղական տուրքի չափի 80 տոկոսի չափով, եթե նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի և մինչև տվյալ փոփոխություն կատարելը վճարված տեղական տուրքի տարբերությունը չի գերազանցում նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի 20 տոկոսը և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան

Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների 2025 թվականի ընթացքում մեկ անգամ և մինչև 3 ամիս ժամկետով երկարաձգման համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տեղական տուրքի դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ տեղական տուրքի չափի 75 տոկոսի չափով (այդ թվում՝ նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4.1 մասով սահմանված դեպքերի), եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) սույն որոշման 6-րդ կետով նախատեսված արտոնության կիրառմամբ թույլտվություն չի ստացել և Երևան համայնքի հանդեպ թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում շինարարության համար մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ստացված շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե շինարարության թույլտվության ստացման համար ներկայացված հայտով կամ դրան կից շինարարական աշխատանքների կազմակերպման ժամանակացույցով կամ նախագծային փաստաթղթերի փորձագիտական եզրակացությամբ շինարարական աշխատանքների կատարման համար նախատեսված է եղել ավելի երկար ժամկետ, քան տրամադրված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետն է և շինարարության թույլտվությունը երկարաձգվում է նշված փաստաթղթերով սահմանված ժամկետից պակաս տրամադրված ժամկետը չգերազանցող ժամկետով և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում բազմաբնակարան բնակելի շենքերի և համալիրների համաձայնեցված նախագծերի վերահամաձայնեցման շրջանակներում միայն ստորգետնյա ավտոկայանատեղիների ծավալային

(մակերեսի) փոփոխություններ կատարելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով նոր շինարարության թույլտվություն տրամադրելիս շինարարության թույլտվության՝ 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

9. 3-րդ և 4-րդ կարգի վթարայնության աստիճանի 10 և ավել բնակարան ունեցող շենքերի քանդման և փոխարենը նոր բազմաբնակարան շենքերի կառուցման նպատակով Երևանի վարչական տարածքում շինարարության թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե կառուցապատողը նախքան թույլտվություն ստանալու հայտ ներկայացնելը փաստացի կատարել է քաղաքաշինական ծրագրի ընթացքում նախատեսված վերաբնակեցման կամ գույքի (բաժնեմասի) ձեռքբերման պայմանները և դիմումատուն (իրավաբանական անձի դեպքում նաև գործադիր մարմնի ղեկավարը) Երևան համայնքի հանդեպ թույլտվության տրամադրման օրվա դրությամբ չունի ժամկետանց դրամական պարտավորություններ:

11.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

21. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան համայնքում 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ՁԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի ժամանակավոր վարչության պետ Դավիթ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1.Արմեն Քոչարյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել, որ.

1) Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում.

բ. երեխան զոհված զինծառայողի ընտանիքի զավակ կամ եղբայր կամ քույր է.

գ. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը զինծառայող է, ռազմական գործողությունների մասնակից է, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհվել (մահացել) է կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններն կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ մահացած.

դ. միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխա է.

ե. երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող անձ է, կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակումով է.

զ. հաշմանդամություն ունեցող երեխա է, կամ Հայաստանի Հանրապետության տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից տրված եզրակացությամբ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա է.

է. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ներքին տեղահանված անձ է.

ը. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի փախստականի կարգավիճակ.

թ. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի ՀՀ-ում ապաստան հայցողի կարգավիճակ.

ժ. Արցախի Հանրապետության տարածքներից տեղահանված և Երևան տեղափոխված ընտանիքի երեխա է.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում չներառված Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում

են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.

3) 2025 թվականի համար, Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, կերպարվեստի, արվեստի դպրոցներ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված անձանց, ինչպես նաև «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի մասնակիցների համար կիրառվում է զրոյական դրույքաչափ, իսկ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի մնացած պարբերություններով սահմանված օգտվողների համար կիրառվում են դրույքաչափի նվազեցման հետևյալ արտոնությունները.

ա. խորացված մասնագիտական երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

բ. գործիքային (դաշնամուր, լարային նվագարաններ, փողային և ազգային նվագարաններ, հարվածային գործիքներ, ակորդեոն, տավիղ, կիթառ, դհոլ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

գ. երգեցողության ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

դ. պարարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

ե. կերպարվեստի ուսուցման համար՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

զ. թատերարվեստի ուսուցում՝ ամսական 8000 /ութ հազար/ դրամ.

է. սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությամբ նշված անձինք, 4 և ավել երեխաներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև սույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված ծառայություններից որևէ մեկով օգտվողները՝ նույն ենթակետի «բ» և «գ» պարբերություններում նշված մեկ այլ ծառայությունից օգտվելու համար ամսական վճարում են 4000 /չորս հազար/ դրամ.

4) Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, կերպարվեստի, արվեստի դպրոցներ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ ունեցող մինչև 100 երեխայի հաշվարկով 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում է զրոյական դրույքաչափ՝ ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

5) Երևանի ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, կերպարվեստի, արվեստի դպրոցներ) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողների կողմից մինչև 2018 թվականի հունվարի 1-ը դպրոցներին վճարվող գումարների և 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի տարբերությունների արդյունքում վճարման խնդիրներ կամ բարձր առաջադիմություն ունեցող մինչև 100 երեխայի հաշվարկով 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են նվազեցման արտոնություններ՝ դրանք

սահմանելով 4000 /չորս հազար/ դրամ, ծառայություններից օգտվողների օրինական ներկայացուցիչների դիմումի հիման վրա, Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով.

6) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման կամ զրոյական դրույքաչափի արտոնություններ, դրանք սահմանելով.

h/h	Երևանի ենթակայության ՀՈԱԿ-ներ	Մուտքի տոմսի արժեքի տեղական վճարի չափը			
		դպրոցական	ուսանող	մեծահասակ	Նախադպր. տարիքի երեխաների, ժամկետային զին., ՀՊ մասնակիցներ, կենսաթոշակառուներ, 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք (ուղեկցողի հետ), 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք (առանց ուղեկցողի),հաշմանդամություն ունեցող երեխաներ, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) և Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ) անդամներ
1.	Երևան քաղաքի պատմության թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
2.	«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
3.	Շենգավիթ հնավայր և թանգարան	300 /երեք հարյուր/ դրամ	700 /յոթ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	0 /զրո/ դրամ
4.	Կարմիր բլուր հնավայր	300 /երեք հարյուր/ դրամ	700 /յոթ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	0 /զրո/ դրամ
5.	Ժամանակակից արվեստի թանգարան	500 /հինգ հարյուր/ դրամ	1000 /մեկ հազար/ դրամ	-	0 /զրո/ դրամ
6.	Կարեն Դեմիրճյանի թանգարան	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ
7.	Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ	0 /զրո/ դրամ

7) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են զրոյական դրույքաչափի արտոնություններ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրվա համար,

8) Երևանի ենթակայության թանգարանների մուտքի համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի արտոնություններ՝ մուտքի մեծաքանակ տոմսերի ձեռք բերման դեպքում՝ կնքելով համապատասխան պայմանագրեր.

ա. 100-ից 500 տոմս ձեռք բերելու դեպքում՝ 5 տոկոս,

բ. 500-ից 800 տոմս ձեռք բերելու դեպքում՝ 10 տոկոս,

գ. 800 և ավելի տոմս ձեռք բերելու դեպքում՝ 15 տոկոս,

9) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձի կամ այդպիսի հաշմանդամություն ունեցող անձին կամ հաշմանդամություն ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամություն ունեցող անձ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ, միայն մեկ տրանսպորտային միջոցի համար, կիրառվում է արտոնություն՝ ազատելով Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիների համար հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

10) որպես վառելիք էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար 2025 թվականի՝ մեկ տարվա համար (մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ ազատելով Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիների համար հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից.

11) Երևան քաղաքի վարչական տարածքում Երևան համայնքի ենթակայությամբ գործող պետական և համայնքային ուսումնական հաստատությունների համար՝ Երևանի քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված՝

ա. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի սահմանների ճշտման և (կամ) հողհատկացման հիմքերի վերականգնման դեպքերում (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

բ. նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

12) Երևանի քաղաքի վարչական տարածքում պետական ենթակայությամբ գործող սոցիալական պաշտպանության կազմակերպությունների շենքերի և շինությունների համար՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2025

թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում միայն ստորգետնյա հարկերի մակերեսի ավելացմամբ պայմանավորված փոփոխություններ կատարելու դեպքում՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու, ինչպես նաև նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու (շենքի կամ շինության ծավալների ավելացում նախատեսող նոր նախագծման թույլտվություն կազմելու) համար 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.

14) Երևան քաղաքի «Ա» և «Բ» գոտիներում կահավորված վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կիրակի օրերին կայանման համար կիրառվում է արտոնություն 2025 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը.

1) Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը՝ տեղական վճարի արտոնություն ստանալու վերաբերյալ, որին կցվում են ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի ծննդյան կամ անձնագրի, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում սահմանված խմբերի ներկայացուցիչ լինելու փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները.

2) Սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը՝ տեղական վճարի արտոնություն ստանալու վերաբերյալ, որին կցվում են ծառայությունից օգտվողի օրինական ներկայացուցչի անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների (արտադպրոցական դաստիարակության հաստատությունների) տնօրենների կողմից տրված տեղեկանքը՝ արտադպրոցական դաստիարակության հաստատությունում տվյալ երեխայի ուսուցանելու մասին, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում սահմանված խմբերի ներկայացուցիչ լինելու փաստը հավաստող փաստաթղթերի պատճենները.

3) Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված դեպքում՝ սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված անձանց կողմից Երևանի քաղաքապետին ուղղված դիմումը, որին կցվում են հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական

մարմնի որոշման, ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի, վարորդական իրավունքի և օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 17

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

22. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին**:**

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 14 անդամ.

1.Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2.Պեդրո Զարոկյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

3.Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

4. Տիգրան Պետրոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

5.Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

6. Արմենակ Դանիելյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

7.Աննա Ավետիսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

8.Սամվել Հարոյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության քարտուղար

9. Արմեն Քոչարյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

10.Ռոբերտ Ծովյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

11. Իոսիֆ Կուբատյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

12.Գևորգ Ստեփանյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

13. Սամվել Հակոբյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

14.Սուսաննա Մելիքյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Քրիստինե Ավետիսյանը, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արսեն Մակվեցյանը, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանը և «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սեդոյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 13 անդամ.

1. Պեդրո Զարոկյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Արմենակ Դանիելյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

3. Հայկ Գրիգորյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Գրիգոր Իսկանդարյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

5. Մանուկ Սուքիասյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

6. Աննա Ավետիսյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

7. Լուսինե Սարգսյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

8.Տիգրան Պետրոսյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

9. Արման Բաբաջանյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

10. Միեր Բեջանյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար

11. Հայկ Սահակյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

12.Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

13.Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» անդամ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Սուրեն Գրիգորյանը, Լևոն Հովհաննիսյանը, Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար Արամ Թորոսյանը և «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն՝

ա. եկամուտների գծով՝ 159,399,554.2 հազ. դրամ,

բ. ծախսերի գծով՝ 159,487,359.7 հազ. դրամ,

գ. դեֆիցիտը (պակասուրդը) 87,805.5 հազ. դրամ:

2) Երևանի 2025 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտներն՝ ըստ ձևավորման աղբյուրների՝ համաձայն N 1 հավելվածի.

3) Երևանի 2025 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումներն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն N 2 հավելվածի.

4) Երևանի 2025 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 3 հավելվածի.

5) Երևանի 2025 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն N 4 հավելվածի.

6) Երևանի 2025 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն N 5 հավելվածի.

7) Երևանի 2025 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից հատկացումները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն N 6 հավելվածի.

8) Որոշման N 6 հավելվածով հաստատված հատկացումների վերծանումը՝ ըստ Երևանի վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների)՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հաստատված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը՝ ըստ ստացող կազմակերպությունների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 32, դեմ՝ 26, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1.Արշակ Սարգսյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2.Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար

3.Մարատ Թոխյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

4.Արմենակ Դանիելյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

5.Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրացվել են ավագանու 4 անդամ.

1.Մեսրոպ Մանուկյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Ռոբերտ Ծովյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

3.Արաքսյա Դիլանյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Արամ Թորոսյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության ղեկավար

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը սահմանելու մասին» N 194-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետում «(N 1 և N 2 Աղյուսակ)» բառերը փոխարինել «(N 1, N 2 և N 2.1 Աղյուսակ)» բառերով.

2) 2-րդ կետում՝

ա. 2-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ. լրացնել նոր 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների վրա:».

3) 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետի իմաստով կազմակերպություն են համարվում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կատարելու իրավունք ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք:».

4) 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Չափորոշիչներով որակի աստիճան շնորհելու նպատակն է Երևան քաղաքում գործող առևտրի օբյեկտների, հանրային սննդի պատրաստման և իրացման օբյեկտների, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների որակական տարբերակումն ու հավաստագրումը, հնարավորության ընձեռումը սպառողներին կատարելու չափելի ընտրություն և համեմատում, ինչպես նաև նպաստելու փոքր ու միջին բիզնեսի ասպարեզում ծառայությունների մատուցման շահագրգիռ կատարելագործմանը և բիզնեսի զարգացմանը, մրցակցային դաշտի կայացմանը և զբոսաշրջիկության զարգացմանը:».

5) 4-րդ կետում «Որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը» բառերը փոխարինել «Սույն կարգի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը» բառերով.

6) 4-րդ կետից հետո լրացնել նոր 4.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Սույն կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում որակավորման գործընթացին մասնակցելու դիմումը ուղղվում է Երևանի քաղաքապետին, որին կից ներկայացվում են՝

1) կազմակերպության դեպքում՝ պետական ռեգիստրի վկայականի պատճենը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի պատճենը, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) սույն կարգի N3 աղյուսակում նշված չափորոշիչներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթեր (մեկից ավելի ավտոմոբիլների դեպքում՝ բոլոր ավտոմոբիլների և դրանց վարորդների համար):».

7) 5-րդ կետը լրացնել նոր 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների դեպքում՝

ա. ճանապարհային երթևեկության կանոնների պահպանումը.

բ. վարորդի (վարորդների) առողջական վիճակը.

գ. ավտոմոբիլի տեսակը, թողարկման տարեթիվը, տարիքը:».

8) 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7. Որակի աստիճանը շնորհվում է 2 տարի ժամկետով: Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին որակի աստիճան շնորհելու դեպքում՝ որակավորման համար՝ որակի աստիճանի շնորհման ժամկետում՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները Երևան համայնքի բյուջե են վճարում տեղական վճար՝ Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված չափով և կարգով:».

9) 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1 Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքում՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպության կողմից տեղական վճարը Երևան քաղաքի ավագանու կողմից սահմանված չափով և կարգով Երևան համայնքի բյուջե չվճարելու դեպքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությանը շնորհված որակի աստիճանը Երևանի քաղաքապետի որոշմամբ դադարեցվում է:».

10) 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Պարենային և ոչ պարենային ապրանքների առևտրի օբյեկտներին, առևտրի կենտրոններին, հանրային սննդի պատրաստման և իրացման կազմակերպություններին (ռեստորան, բար, սրճարան), մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին որակի աստիճանի շնորհումը կատարվում է դրանց վերաբերող չափորոշիչներին տրված բալային արժեքների հանրագումարով (N 3 Աղյուսակ):».

11) N 2 աղյուսակից հետո լրացնել նոր N 2.1-ին աղյուսակ՝ համաձայն N 1 հավելվածի.

12) N 3 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին որակի աստիճաններ շնորհելու գործընթացը կազմակերպելու համար ստեղծել համապատասխան հանձնաժողով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 13

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը